№ 17 ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍ 13 — 1895 — ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍ 13 № 17

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՀԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղուան, կէս տարուանը 6 ղուան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուրլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուրլի։

Արտասահմանից փոխի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՀԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՀԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չեն 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցների տնտեսական հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսուցիչների հարցը Արարատեանում և Դավրէժի Արամեան դպրոցը. Նամակ Բարֆրուշից. Նամակ Դավրէժից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —Յայտարարութիւններ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Դավրէժի կեանքից։

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԸ

II.

Անցեալ անգամ ասացինք, որ դպրոցներին իբր տնտեսական մշտական աղբիւր կարող է ծառայել տեղական եկեղեցու եկամուտները։ Այդպէս է թիւնում Կովկասում, Թիւրքա-Հայաստանում և Պարսկաստանի մի քանի հայաբնակ քաղաքներում, որոնցից մէկն էլ Ռաշտն է։ Հայը դեռ միստիքականութեան մէջ ծթռած մի հասարակութիւն է, չը նայելով որ Եւրոպական քաղաքակրթութիւնը քայլ առ քայլ շարժում է նրան. հայը դեռ աղոթել, մոմ վառել և եկեղեցու գանձարանին տալ իր տասանորդը՝ չէ մոռացել և ոչ էլ նւազեցրել է. նա դեռ շարունակում է եկեղեցու պատերը համբուրել, ուխտատեղիները բանեցնող կրօնաւորների տալ, եկեղեցիների եկամուտները գործածող երեսփոխանի ձեռքը յանձնել Աստուծոյ համար գրպանից հանուած տասանորդը... մի խօսքով հայը, այժմեան քրիստոնեայ աղգերի մէջ հանդիսանում է որպէս ամենաջերմեռանդներից մէկը. որտեղ ասես նա եկեղեցիներ, վանքեր, ուխտատեղիներ, սրբերի գերեզմաններ և այլն և այլն չունի. որ կրօնական հիմնարկութիւնը ասես որ նրանից չը քաշի—հանի տասնեակ ոսկիներ... այդ բոլորի համար հայը տալիս է և յաճախ ուրախութեամբ է տալիս. այնպէս, ինչպէս շվեյցարացին կը տար իր աղատութեան կամ իր կրթութեան համար։

Հայը պահպանողական աղգերի մէջ լաւ տեղ է բռնում. տիրացու

թեան և տգիտութեան մէջ։

Կրկնում ենք. եթէ մենք Աւետարանի մաքուր, ընկերաբանական վսեմ պատուէրներից արտադրել ենք միմիայն կեղծ բարեպաշտականութեամբ, սուտ ճգնաւորութեամբ վարակուած մի ամբոխ, եթէ այդ բարձր գրքից վիժել են պարազիտներ, քրիստոնէական ազատ ոգին ստրկական ձգտումների, գծուծ շահերի և կեղծութիւնների ծառայեցնող՝ դասակարգեր կամ հասարակութիւններ,—այդ բոլորի պատճառը միմիայն տգիտութիւնն է, որի մէջ խորասուզված այդ տեսակ ժողովուրդը՝ ոչ կարողանում է աւետարանի ոգին ըմբռնել և ոչ էլ ընդունակ է նրա մաքուր և բարձր ըսկզբունքներին վարժեցնել իր՝ նախնական թանձր տգիտութեան մէջ փտած՝ ուղեղը։

Տգիտութիւնն է, որ Աւետարանի մէջ տեսնում է միմիայն միստիկականութիւն, տարտուֆութիւն. տգիտութիւնն է որ եկեղեցւոյ պատերը լցելը, կրօնաւորների բուռը լցնելը և կամ հազար ու մի այլանդակ նախապաշարումների ստրուկ ճորտ դառնալը համարում է քրիստոնէութիւն։ Տգիտութիւնն է, որ կեղտոտ շահերի համար յանդգնում է անգամ Աւետարանի խօսքերը իրը օգնական վերցնել և նրանով հալածել ինչ որ մաքուր է, ինչ որ բարձր է. տգիտութիւն է որ սկզբնական մաքուր քրիստոնէութիւնը այնքան աղաւաղել և խեղաթիւրել էր որ աւետարանը կարծես այդ նոր՝ տգիտութեան արդիւնք՝ կրօնի գիրքը չէ։

Տգիտութիւնը դեռ ի՞նչեր չէ արել և ի՞նչեր չէ անում։ Չէ՞ որ նա է անհատին կեղտի, ստրկութեան, ստորութեան և լրբութեան մէջ բորբոսեցնողը. չէ՞ որ նա է որ վարժեցնում է անհատին գործադրել ամեն ստոր միջոց՝ իր բուսական կեանք քարշ տալու համար. չէ՞ որ տգիտութիւնից է, որ կան մարդիկ որոնք սիրում են ծուլել և ծուլել՝ մի կըտոր ոսկի ունենալու համար...

Այդպիսի հասարակութիւնները վաղ թէ ուշ այնպէս ոչնչանում են, որ Եգիպտոսի պատմական հնութիւնների պէս անգամ հետքեր չեն թողնում. այդպիսի անհատները սկզբում յաջող, բայց վերջ ի վերջոյ այնպէս թշուառանում են, որ երանի են տալիս չինացուն։

Ազատենք ուրեմն մեր հասարակութիւնները այնպիսի անհատներից, որոնք կրօնը իրենց շրթունքների ծայրերով են միայն պաշտում, որոնք քրիստոնական ոգին են աղաւաղում—իրենց շահերի կաղապարով ձուլում. ազատենք սուտ-բարեպաշտներից և պատրաստենք ճըշմարիտ քրիստոնեայ, մաքուր, բարձրութեան ձգտող, ստորութիւնից գարշող մի հասարակութիւն, որ դիմանայ գոյութեան կռուին, չը ընկճի քաղաքակրթութեան հոսանքից և կարողանայ կուրծք տալ կեանքի դժուարութիւններին։

Ազատենք մեր հասարակութիւնը միստիքական անմտութիւնների ծթռած գաղափարներից և միջոց տանք որ Քրիստոսի եկեղեցին իր արդիւնքովը գոնէ ճշմարիտ, տնկեղծ և մաքուր հաւատացեալներ կարողանայ գոյացնել։

Քրիստոսի եկեղեցւոյ յետին կոպէկը հարկաւոր է գործադրել նրան հաւատացող հասարակութեան մատաղ սերնդի կրթութեան գործի համար. նրա վերջին փողը հարկաւոր է տալ պատրաստելու համար գիտակցաբար ապրող, բարձրութեան ձգտող, ստորութիւնը ոտնահար անող և ինքնաճանաչ մի սերունդ... Եկեղեցին գոնէ այդ օգուտը պիտի տայ իր եկամուտներով և այդ, իր գոյութեան համար իսկ օգտակար է։

Հարկաւոր է ուրեմն լրջութեամբ ամփոփել նրա եկամուտները, խլել զանազան պորտաբոյծների ձեռքերից և չը թողնել որ լաւ քրիստոնեաներ, լաւ մարդիկ պատրաստող հաստատութիւնները հոգևարքի մէջ տառապեն՝ տնտեսական միջոցների սղութիւնից։

Թող սրա վրայ լրջօրէն մտածեն նրանք որոնք ձեռնհաս են այդպիսի գործերում։

Վ. Ֆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՐՑԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ ԵՒ ԴԱՎՐԷԺԻ ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԸ

—

Դավրէժի մի բուռն հայեր ըմբռնած լինելով որ կրթութիւնն է իր միակ նեցուկը, յենարանը՝ սրանից մօտաւորապէս յիսուն տարի առաջ, քաղաքական ամենանեղ հանգամանքներում հիմն են դնում այժմեան Արամեան դպրոցի և մինչև այսօր չեն խնայում իրենց լուման այդ օգտակար, բարենպատակ հիմնարկութեան յառաջադիմութեան համար, յուսալով որ այդ հիմնարկութիւնը հասարակութեանը կը տայ բանիբուն, կրթեալ, պարտաճանաչ քաղաքացիներ. որպէս բնութեան, նոյնպէս և մարդկային հասարակութեան մէջ ամեն ինչ կերպարանափոխուում է շարունակ, բայց ցաւալի է ասել, որ Արամեան դպրոցը ոչ մի զգալի փոփոխութիւն չի կրել, հետևապէս և չի տուել սպասած արդիւնքը։ Ընթերցողը կը հարցնէ՝ ինչո՞ւմն է դրա գաղտնիքը. ահա թէ ինչումն է։

Որովհետև այս ծանր գործի ղեկը ընդմիշտ յանձնուած է եղել (որդոց-որդի կարծես ղաբալով տրուած է) հարուստներին, որոնք անձեռնհաս, անկարող են այսպիսի փափուկ՝ խելք, հանճար և հմտութիւն պահանջող դպրոցական պաշտօնի. դպրոցը մի այնպիսի հիմնարկութիւն է, որի հետ պէտք է վերին աստիճանի խոհեմութեամբ, լրջմտութեամբ վերաբերուել, ապա թէ ոչ, հետևանքը կը լինի հենց այն, ինչ որ նկատվում է այսօր։

Ճշմարիտ է, երբեմն գտնուել են բարեխիղճ ուսուցիչներ, (մի քանիսը կան և այժմ) որոնք էներգիայով աշխատել են հիմնովին բարեփոխել, բարեկարգել դպրոցը, վերանորոգել ծրագիրը, դուրս բերել հին սխոլաստիքական խախուտ սիստեմից, որը միանգամայն աւերիչ է է եղել և մտցնել այն, ինչ որ պահանջում է ժամանակը, ինչ որ յարմար է ժողովրդի ներկայ կացութեանը, գիտենալով որ սրան է վերապահուած ապագայում Ատրպատականի հայաբնակ քաղաքներում և գիւղերում կրթութիւն տարածելու վեհ դերը. բայց այսպիսիք ևս հանդիպելով փառասէրների յարուցած արգելքներին և սրանց դէմ մինչև վերջ մաքառելը կարողութիւնից վեր գտնելով, տարայ կիսում կամ վերջում թքել և հեռացել են։

Կուլտուրայի թշնամիներից նախատուած, հալածուած, բարեխիղճ ուսուցիչների նախագուշակութիւնները այսօր կատարուած ենք տեսնում։ Գաւառներից ամեն տարի քնից սթափուած ժողովուրդը կենտրօնից ուսուցիչներ է խնդրում, (որի ոյժը չի պատում Ռուսաստանից հրաւիրել, թէպէտ իսկի նրանք լայեղ չէին անիլ Պարսկաստանի նման ցեռ ընկած գիւղերում ուսուցչական պաշտօն ստանձնել) բայց միշտ էլ բացասական պատասխան է ստանում. իսկ երբ խընդիրը պահանջի է փոխվում, այդ դէպքում առանց կարմրելու դիմում են բողոքականների մօտ աւարտած երիտասարդներին. ամօթ չասենք, ինչ անենք. բողոքականների դպրոցի գոյութիւնը հազիւ 12—15 տարի լինի, 18 գաւառական ուսուցիչներ է տուել, որոնցից ոմանք լուսաւորչականների, իսկ մնացեալները բողոքականների կողմից ուսուցիչներ են Ատրպատականի քաղաքներում և գիւղերում. գուցէ դավրէժցիք կասեն գիւղերից հաւաքուած աղքատ ուղքատներ են. բայց միթէ քիչ աղքատների զաւակներ Արամեան դպրոցը աւարտած իսկ բոպէից ասպարէզից խոյս տալով 2—3 տարով ձրի ծառայում են վաճառականների մօտ, մինչև որ լօյալական գաղտնիքներին ծանօթանան. մինչ դեռ համեստ ռոճիկով առաջին տարուանից կարող էին ժողովրդին մեծ ծառայութիւն անել. սա էլ փաստ է. միւս կողմից տիրացու բաղդախնդիրները ասպարէզը դատարկ գտնելով, իրար գըլուխ են կոտրում։

Ներկայումս գաւառական ուսուցիչների պահանջը այրող հարցերի առաջինն է։ Ատրպատականում մօտաւորապէս 60 հայաբնակ վայրեր կան, որտեղ ուսումնարանի գոյութիւնը անհրաժեշտ է, և դրանց ուսուցիչներ ունենալու հարցը կախուած է Դավրէժի դպրոցներից։ Ի՞նչ դիրք է բռնել Արամեան դպրոցը և ի՞նչ է արել. պատասխանը բացասական է. յուսալի է որ ներկայ հոգաբարձական մարմնի օրով Արամեան դպրոցը իր պարտքը ճանաչի. սրանց մէջ կան խոհեմ երիտասարդներ, կան և այնպիսիները որոնք սովորել են Լազարեան ճեմարանում և Ներսիսեան դպրանոցում. միանգամայն վստահանում ենք ասել՝ սրանք և սրանց նմանները տասն անգամ բարձր են իրենց նախորդներից և իրենց պատասխանատու բարձր կոչումը ճանաչելով դպրոցիկը բարեփոխեն, որը սերտ կապ ունի ուսուցիչների ընտրութեան հետ։ Սպասում ենք ուրեմն, որով ետև «որին շատ է տուած նրանից շատ էլ կը պահանջի»։

Ա.

ՆԱՄԱԿ ԲԱՐՖՐՈՒՉԻՑ

—

26 ապր. 95

Խնդրեմ եթէ արժան կը համարէք ներկայ գրութիւնս զետեղէք «Շաւիղի» էջերում։ Թէհրանից մարտ 23-ին ճանապարհվելով, 30-ին հասայ Բարֆրուշ քաղաքը. այստեղ կարդալով «Շաւիղի» բանասիրականի բաժնում, «Նամակ Արտաբիլից» ի շարս այլոց՝ նամակագրի հաղորդած Աստարի կոմիսիօնների դէպի միմեանց դէմ ունեցած սև նախանձը և դէպի իրենց գործակատարներն ունեցած անտարբերութիւնը՝ ի հարկէ ցաւալի է։

Բայց դրա հակառակ, շատ ուրախալի է տեսնել Բարֆրուշի վաճառականների և Մեշէտիսէրի կոմիսիօնների դէպի միմիանց ունեցած համերաշխ սէրը. Բարֆրուշ կայ մօտաւորապէս 20 հայ վաճառական, իսկ Մեշէտիսեր բնակող 4—5։ Մարտի 31-ին, Մեշէտիսեր բնակվող պ. Դաւիթ Փանեանցը հրաւիրել էր Բարֆրուշի վաճառականներին իր մօտ որ Զատիկը միասին կատարեն և միասին ուրախանան։ Պ. Փանեանցի հրաւէրը ուրախութեամբ կատարեցին վաճառականները. շաբաթ օրը ապրիլի 1-ին ճանապարհվեցին Մեշէտիսէր, պ. Փանեացի տունը. ի շարս այլոց և ես կայի, աւելորդ է գրել երկու օրվան մէջ թէ պ. Փանեանցի իւր հիւրերին տուած պատիւը և թէ բոլորն միասին կատարած ուրախութիւնը. սեղանի վրայ նստած ժամանակ, մէկ փոքրիկ 8 տարեկան երեխայ Մուշեղ Բէկլարեանց անունով, ճառ կարդաց և ակնարկելով մեր առաջ բացուած ճոխ սեղանը ու նրա վրայի զատկական գառը և կարմիր ձուն, իրը հակապատկեր նկարագրեց մեր եղբայր սասունցուն, քաղցած ու մերկ անտուն անտեղ սարերում, դաշտերում, առանց կտոր հացի անգամ. և ասաց «թէև աւազի հատիկները փոքր են. բայց նրանցից է գոյանում սարերը,» այս սրտառուչ խօսքերն շատ ազդեց բոլորի վրայ. իսկոյն սկսվեց ստորագրութիւն Սասունցի սովեալների օգտին և հաւաքուեց հարիւր քսան թուման. միւս օրն էլ մէկ պարոն ներկայացրեց մի ժապաւինեալ մատեան, Ջուշու գաւառի Թաղլար գիւղի ուսումնարանի հոգաբարձութիւնից վաւերացրած և առատաձեռն պարոնները չը զլացան այդտեղ էլ գրել և հաւաքուեց ութսուն թուման։

Այժմ մի պատմութիւն պատմեմ բողոքականների մի թափառական քարոզիչ—գրածախի մասին։ Երբ այստեղ եկայ, իջայ մի սենեակում, ուր բնակվում էր աւետարանական ընկերութեան գործակատար Կաչայ Խաչերայիմով անունով ասորին՝ իր փոքրիկ որդու հետ, Ռաշտից էին եկել, ս. գրքեր ծախելու և քարոզելու։ Երբ ես, հրաւիրած լինելով, Մէշէտիսէր էի գնացել, միւս օրը տեսայ սենեակիս ընկերոջ այնտեղ. հարցրի թ ինչու էր եկել, ասաց որ Աստարաբադ է գընում և շորերս թողել է սենեակում, բայց երբ Բարֆրուշ եկայ, տեսայ որ պարոն քարոզիչը սպիտակեղէններս զողացել էր. շտապեցի Մէշէտիսէր. խեղճ գողի բաղտից շոգենաւը ուշացել էր. ի հարկէ զողացած բաները ձեռքիցն առի, մի լաւ էլ ծեծեցի, չուղեցի դատի յանձնել և թողի որ գնար Աստարաբադ՝ քրիստոնէութիւն սէր և աւազակութիւն քարոզէր միամիտ ժողովրդին։

Աբրահամ Սարումեանց

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

12 ապրիլ 95

Դավրէժ քաղաքը զուրկ է առատ ջրից. մեր քաղաքի մերձակայքում ուրիշ քաղաքների պէս գետեր ու առուակներ չեն անցնում. քաղաքի սահմանից դուրս՝ հիւսիսային կողմից հոսում է Աջի գետը. նոյն իսկ եթէ հնար լինէր այդ գետը քաղաքի միջով անցկացնել դարձեալ չէր կարող մի օգուտ տալ իւր դառնութեան պատճառով։ Դավրէժի ջուրը քաղաքի հարաւային կողմի լեռների աղբիւրների հաւաքածուն է, որ արհեստական ջրուղիների միջոցով գալիս է քաղաք և իւրաքանչիւր թաղ ունի իւր աղբիւրը. գարնան ժամանակ իւրաքանչիւր թաղի համայնքը ջրի տիրոջից զաբալով վերցնում է և իւրաքանչիւրը իւր կարիքի համեմատ փող է վճարում, ու տւած փողի համեմատ ջուր ստանում, որ առհասարակ ժամով է բաժանվում. բայց ցաւ ի սիրտ պէտք է նկատել, որ հարուստ կոչված դասակարգը ոտնատակ են տալիս դաշնադրութեան բոլոր կանոնները, ջուր բաժանողին որը «միրաբ» է կոչվում, կաշառում են որ իրենց ջուրը ժամանակին առանց գլխացաւ պատճառելու առատ բերեն. ի հարկէ թէպէտ իրենց համար այնքան մեծ նշանակութիւն չունի մի քանի զրանները, բայց ցաւալին այն է, որ չեն մտածում թէ արդեօք կարող է աղքատ դասակարգն էլ այդ նոյն կաշառքը տալ, և ինչպէս տայ քանի որ այդ մի քանի զռանները նորա ամբողջ ընտանիքի մի շաբաթուայ ծախքն է. ուստի ի դէպ է թւել աղքատ դասակարգի կրած զրկանքները։

Լիլավայում հերթով փողոցների միջով ջուրը անցնում է. անիծիր թէ հարուստ և թէ աղքատ իրաւունք ունի իւր տւածի չափ ջուր ստանալու, բայց եկ տես. հարուստից կաշառած ջրաբերը աղքատ դասակարգի զռնով ջուրը անց է կացրում, հարուստների ամբարները լցնում, իսկ աղքատինը մնում է կամ դատարկ կամ կիսալիքը հին հոտած ջրով. հարստահարւած որբևայրին հակառակ մեր քաղաքի հարեմական կանոնի՝ փողոց է դուրս գալիս, ճիշ ու աղաղակ բարձրացնում որ իրաւունք ունի իւր տւած փողի համեմատ ջուր ստանալու. թշուառականը մինչև անգամ իւր բողոքը լսելի է անում հարուստ հարևանին, բայց ոչ ոք չի լսում նորա ճընշւած ձայնը, ընդհակառակը ենթարկելով միրաբի կոշտ ու կոպիտ անվայել հայհոյանքներին՝ ստիպւած մնում է իւր խուցը, իւր պատիւը պաշտպանելու։ Հարուստներ, դուք, անվրդով լսում էք որբևայրիների անարգվելը և չէք իրճահարվում, այն որբևայրիներին, որոնք օրն ի բուն ձեր դռներում քաշ գալով հաղիւ են ձեռք բերում իրանց խղճուկ որբերի ապրուստը. նրանց ամբարների մէջ ջուրը այնքան մնում է, որ սաստիկ հոտում է, այնպէս որ բակի օդը բոլորովին ապականում է. ստիպւած այդ ջուրն են խմում և նորանից առաջանում է պէս պէս տարափոխիկ հիւանդութիւններ, որը, մանաւանդ, դիֆտերիտ կոչված հիւանդութեան տարածվելուն՝ շատ նպաստում է. այս սարսափելի հիւանդութիւնը՝ որ տասնեակ տարիներով բուն է դրել մեր քաղաքում, որը հէնց ամեն տարի նախ ծնունդ է առնում աղքատ դասակարգի տներից որովհետև վերոյիշեալ հանգամանքներում էկանվում, իր հունձը անխիղճ անում է առանց խնայելու հարուստների մանուկներին. գոնէ այսուհետև իսէր անմեղ մանուկների մեր հարուստները թող զգուշանան։

Մ. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի թերթերը հաղորդում են որ Հայոց Կաթուղիկոսը Նոր-Նախիջևանում յօգուտ իր վանքի բաւական փող հաւաքելուց յետոյ, մտադիր է այժմ Բագու վերադառնալ։

—

Մարաղից մեզ գրում են. «Ինչպէս լսում ենք, Սուլդուզում նորաբաց դըպրոցի պատճառով. ժողովրդի մէջ երկպառակութիւն է ծագել, ուսուցչին լաւ ծեծել են և գիւղից վռնդել (Նաղադէ գիւղը). այդ առթիւ գործակալ տէր Տաճատը գնացել է Սուլդուզ։»

—

Նոյն տեղից հաղորդում են հետևեալը «Մեր ազգային ուսումնարանը վերջապէս շնորհիւ պարոնայք Միքայէլեանների աղատւեց Ֆալչի Յունան վարժապետի ձեռքից։ Այսօր նա իր սրիկայական և անմարդավայել վարմունքի պատճառով տէրութեան բանդումն է գըտնվում։ Որովհետև «Շաւիղը» մի անգամ յայտնել է որ էլ մտադրութիւն չունի այդպիսի տխմարների կռիւներովը զբաղլու, մենք էլ ուստի զանց ենք առնում նրա այդ մի ամսւայ ընթացքումը զանազան անձանց հետ արած զզուելի կռիւները նկարագրել։ Միայն այդքանն ուզում ենք յայտնի լինի ընթերցողներին, որ այսօր նրա կռիւների պատճառով ժողովրդի մէջ մեծ շփոթութիւն ու խառնակութիւն է տիրում։»

—

Դավրէժից գրում են, որ Ատրպատականի առաջնորդ Պարզեանը այլ ևս չէ ուզում հեռանալ։ Երևի փորձել էր ուզում Դավրէժի հասարակութեան, որպէս զի հետևանքը տեսնի, արդեօք խմբերով չէն թափւի առաջնորդարան աղաչելու որ նորին բարձր-սրբազնութիւնը բարեհաճի (ամենողորմածաբար) ետ առնել իր հրաժարականը.»

—

Նոյն տեղից հաղորդում են. «Ներկայումս Թաւրիզումն են՝ Սարաճեան, Դատեան և Եսայի վարդապետները։ Սպասում են Սալմաստի հերոս Արսէն վարդապետ Վեհունի-Վհուկին և վերջինի արժանաւոր աշակից՝ Խոյի, այլև Ուրմիոյ, այլև Սալմաստի թեմական տեսուչ Մ. Աւետիսեանին։ Յայտնի գոյնի այդ շայկայի Դավրէժ խմբւելը անշուշտ մի ինչ որ գաղտնի խորհուրդ ունի, որ մեզ հասարակ մահկանացուներիս անմատչելի է...

—

Շիրազից ստանում ենք միմեանց հակասող թղթակցութիւններ. Ծիծաղելի է որ մի ոմն պ. Մարգար Յ. Ամիրխանեանը, հանրագրութիւն է կազմում ապացուցանելու համար թէ իր ասածները ճիշտ են։ Իսկ գիտէք թէ նրա ասածները ինչ են։ 1) իրենից բացի Շիրազից գրողները ստախօս են. 2) եկեղեցապատկան կալւածները ոչ ոք չէ ոչնչացնում և 3) քահանան գոհ է Շիրազցիներից։ Իսկ դրա հակառակ մի ուրիշ պարոն պատասխանում է մի երկար նամակով և պարզում է թէ ինչու եկեղեցապատկան կալւածները ոչնչացնում են (քանի որ պ. Ամիրխանեանցի քոյրերն են վայելում ձրի) և թէ ինչու քահանան գոհ է (որովհետև երբէք լուրջ չէ՝ խմած գինուց)։ Ծիծաղելի թղթակցութիւններ են դրանք։ Մի անգամ ընդ միշտ յայտնում ենք որ այլ ևս մի տող չենք տպելու այդ մի բուռ միմեանց զզվող հայերի գործերի մասին. մթթէ կարծում են թէ «Շաւիղը» շատ տեղ ունի և կամ ուրիշ հայեր հետաքրքրվում են մի որ և իցէ Մ. Ամիրխանեանով և նրա պաշտպանած պորտաբոյծ կրօնաւորներով։

—

Տխուր լուրեր են հասնում մեզ Դավրէժից Արամեան դպրոցի տեսչի մասին։ Ինչ որ էր, այս տարին անցաւ. Հոգաբարձութիւնը այժմ պարտաւոր է ապագայ տարւայ մասին հոգալ և այլ ևս չը վստահել զանազան վաճառականների ուղղակած տարրական դպրոցներից կամ կիսատ-պռատ սովորած տեսուչների, ուսուցիչների։ Այդ մասին հոգաբարձութիւնը կարող է դիմել խմբագրութիւնների և կանդիտատներից վկայագրեր գոնէ պահանջել։ Հարկաւոր է որ Արամեան դպրոցը եթէ ոչ համալսարանական, գոնէ ուսուցչական ինստիտուտը աւարտած մի տեսուչ ունենար, իսկ ուսուցիչների համար պահանջէին անպատճառ Ներսիսեան դպրոցի աւարտման վկայական գոնէ։ Մինթէ կրթական գործի վերաբերմամբ այնքան թեթև պիտի լինել, որ Արամեան դպրոցի պէս մի հաստատութիւն յանձնւի մի տիրացուի տեսչութեան, լինէր նա նոյն իսկ Հայոց Կաթուղիկոսի յանձնարարածը։

—

Մեր այս համարում տպւած առաջնորդող յօդւածի վրայ Թէհրանի առաջ. փոխանորդի մասնաւոր ուշադրութիւնն ենք հրաւիրում. չէ՞ որ Թէհրանի դըպրոցն էլ տնտեսականի կողմից տառապում է, մինչ եկեղեցւոյ եկամուտը, նրա ունեցած 8 տների եկամուտները և այլն. ով գիտէ ինչ բանի են գործադրվում և մի կոպէկ իսկ չեն տալիս դպրոցին, չը նայելով որ Եսայի եպիսկոպոսի կոնդակը այդ արտօնութիւնը տալիս է Հայկազ. դպրոցին։ Հարկաւոր է խլել այդ կալւածները և եկամուտները նրանց շահագործողների ձեռքից, յատկացնել դպրոցին և չենթարկել նրան մուրացկանութեան։ Մենք շուտով առիթ կունենանք մի առ մի թւել թէ որպիսի եկամուտներ և փողեր ունի դպրոցը, որ մուրում է այժմ, մինչ այդ փողերը կլանվում են զանազան անձերից։ Մենք պիտի թւենք անձերը և գումարները։

—

Այսպիսի մի գայթակղեցուցիչ փաստ էլ մեզ հաղորդում են Ռաշտից այնտեղի ուսուցչի և վարժուհու մասին։ «Զատկի երկրորդ օրը ուսուցիչը և ուսուցչուհին, աշակերտները և աշակերտուհիները առած, այցելութիւններ էին անում մի քանի աղաների, և ինչպէս հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, այդ բանի մէջ եղել է նաև իրենց անձնական գուտը. մեզ մնում է զարմանալ, որ լիշիալները, տեղական ժողովրդի թուլութիւնից օգտուելով, յանդգնում են այդտեսակ խալֆայական զզուելի սովորութիւնները գործադրել։

—

Երկուշաբթի մայիս 15-ին սկսում են Հայկազ. դպրոցի քննութիւնները և կը վերջանան ամսի 26-ին. այսօրւայ համարի յայտարարութեան բաժնում տպում ենք ժամանակագրութեան ցուցակի առաջին շաբաթւայ մասը։ Դըպրոցի դռներն բաց են բոլորի առջև. ամեն ոք կարող է ներկայ լինել քննութիւններին։ Զարմանում ենք միայն թէ ինչու ուսուցչական խորհուրդը այսպէս ուշ է սկսել քննութիւնները, քանի որ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը—ինչպէս հաղորդում է «Մշակը»—իր քննութիւնները սկսել է Մայիս 1-ից։

—

«Մշակի» մէջ կարդումենք.«Մեզ հեռագրում են Վիէննայից, ապրիլի 21-ից հետևեալը. «Կ. Պոլսից հեռագրում են այստեղի լրագիրներին, որ ապրիլի 20-ին Կ. Պոլսի Հայոց թաղում այրվեց 150 տուն». դժբաղդ եղբայրներ. էլ պատուհաս մնաց որ չը գար նրանց գլխին։

—

Այս օրերս առիթ ունեցանք փորձելու մի շատ ազդու դեղ փորի ճճուի (սոլիտեր, տէնիա) դէմ. խմբագրութեան անդամներից մէկը փորձեց իր վրայ և 5 տարւայ ճճուն գլխովը ցած ընկաւ 3—4 ժամ՝ դեղը խմելուց յետոյ։ Դեղը ոչ ծոմապահութիւն է պահանջում և ոչ լուծողական, այլ միայն ազօտային կերակուրներ—այսինքն պասուց բաներ ուտել։ Խորհուրդ ենք տալիս ամենքին, որոնք տառապում են այդ մեծ պարազիտից, դիմել դեղը ունեցողին, որ տալիս է դեղի հետ նաև հարկաւոր պատուէրները։ Դեղը շատ ժան է։ Դիմել—Թէհրան, Մահտեսի Յորդանան Եղեազարեանցին։ Այդ մասին կարդալ մեր յայտարարութիւնների բաժնում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Կանանց հարցը և ամուսնական խնդիրը—ահա այն երկու մեծ հարցերը, որոնք այրողութիւն են ստանում հետզհետէ, մէկը եւրոպական մամուլի, միւսը Կ. Պոլսոյ հայ թերթերի մէջ։

Եւրոպական մամուլում գրում են կանայք, գրում գիտնականներ և պրոֆէսորներ, որոնցից մեծ մասը լուսամիտ մտածողներ, աշխատում են ապացուցանել որ թիւր է այն կարծիքը թէ կնոջ ուղեղը պակասաւոր է և թիւր ուրեմն այն «բնական» համարւած վարդապետութիւնը, որ կնոջը դատապարտում է մնալ որպէս հպատակ տղամարդին, խոհանոցի, մայրութեան և տղամարդի զարճութեան համար միայն պիտանի, զուրկ մարդկային շատ իրաւունքներից։

Այսպէս, մինչդեռ մի կողմից Եւրոպայում

կանայք սկսում են պահանջել իրենց իրաւունքները և իրենց զարգացողութեամբ ու խելքով ետ չեն մնում տղամարդուց, մեր մէջ ընդհակառակն, հայ կինը իր յիմարութիւնը սկսել է լրագրով իսկ երևան հանել։

«Մշակ» և «Նոր-Դար» լրագիրներն մի ամսից ի վեր կարդացողները անշուշտ գիտեն այն վէճի մասին, որ բացուել է «Նոր-Դարի» խմբագրի և պ. Ց. Սպենդիէրեանի մէջ։ Մի զզուելի վէճ է այդ. երկու կողմից ևս էլ հայհոյանք չը մնաց որ չը տեղային իրարու գլխի։ Խնդրի էութիւնը ահա թէ ինչ է։ Երբ Թիֆլիզում մեռնելու մօտ է լինում Լևոն վարդապետ Խոջայեանը, Էջմիածնի կաթուղիկոսից ստանում է 50 ռուբլի նէր. վիրաւորուած զրանից, հիւանդը խնդրում է իր բարեկամ Ց. Սպենդիէրեանին որ իր գրած երկտողի հետ՝ այդ փողը վերադարձնի կաթուղիկոսին։ Նամակը մի խուլ և կծու բողոք էր դէպի հայոց կաթուղիկոսը։ Պ. Սպենդիէրեանը իր մեռած բարեկամի վերջին պաւէրը կատարելու համար դնում է փողը մի ծրարի մէջ նամակի հետ, (մեռածի պատկերն էլ կարծեմ) և ուղարկում է Նոր-Նախիջևան իր ծանօթ մի հայ տիկնոջ, նամակի երեսին գրելով «խնդրեմ յանձնել վեհ. հայրիկին» հատատացած լինելով որ ամէն ուղարկուած նամակ կաթուղիկոսին չէ տրվում. և ահա, երբ նամակի բովանդակութիւնը իմացվում է և կաթուղիկոսը զզում է հարուածը, մեր նուրբ ջղեր ունեցող տիկինն է սուլթափվում, ճիչեր արձակում և ասպետներ է փնտռում, որոնք հեռագիրներով նախատում են պ. Սպենդիէրեանին։ Իսկ սրա ամբողջ մեղքը նրանումն է լինում, որ իր ծանօթ տիկնոջ հասցէով է ուղարկած լինում կաթուղիկոսի նամակը։ Եթէ այդ պատմութեան մէջ մի ուրիշ, մեզնից ծածուկ «և» չը կայ—որին ասելու վախենում են կամ պմաչում—այդպիսի դէպքում մարդու ծիծաղն է գալիս թէ պատուելի տիկինը ինչու է այդքան վիրաւորուել որ ասպետներ է փնտռում նամակ ուղարկողի վրայ նախատինքներ տեղալու համար և այդ բաւական չէ, ինքն էլ է երևան գալիս «Նոր-Դարի» մէջ, այսպիսի դոնքիշոտական խօսքերով «դուք պարոն, ինչպէս համարձակուեցիք մի այդպիսի նամակ իմ հասցէով ուղարկել, այդ է ձեր աղնուութիւնը» և այլն և այլն... մարդ ապշում է, սար տիկին, ինչ կը լինի եթէ մէկը դժբաղդութիւն է ունեցել ձեզ ճանաչելու և այժմ կաթուղիկոսին յանձնելիք մի նամակ ձեր հասցէով է ուղարկել։ Ձեզ ինչով վիրաւորեց, որ այդ ասպիճան ազմուկ էք ձգում հայ մամուլի մէջ դուք և ձեր երեսելի ասպետ Ալաճալեանը։ Դոնքիշոտութիւն—յիմարութիւն չէ բա ինչ է է այդ՝ տիկին Զահրաղեանի կողմից։ Ի հարկէ, ձեռնպահ եմ մնում, եթէ մէջը կայ մեզնից ծածուկ մի «և», որին երկու կողմից էլ ամաչում են երևան հանելու և մեզ—ընթերցողներին կերակրում են միմիանց վրայ տեղացող փողոցային հայհոյանքներով մի չնչին, աննշան, զրեթէ երեխայական առիթով։ Ի հարկէ ես չեմ աչքի առջև ունենում այն հանդամանքը որ «Նոր-Դար» թերթի պատուական խմբագիրը սեփհականացնում է, սխալմամբ իրեն բերած, պ. Սպենդիէրեանի հեռագիրը և մինչև իսկ տպագրում նրան, լինելով խիստ թշնամի Սպենդիէրեանի հետ։ Այդ գծուծ ընթացքը կրիտիկայից իհարկէ ցած է գտնվում։

Մեզ հարկաւոր է մի քանի խօսք էլ ասել Կ. Պոլսի «Հայրենիք» թերթի քաջարար արծարծած ամուսնական խնդրի մասին. այդ մենք կանենք միայն եկող անգամ, որովհետև խնդիրը աւելի լուրջ է և հարկաւոր է քիչ երկար կանգ առնել նրա վրայ։

Վ. Փ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Աշխարհիս առաջին տենոր երգիչ Մազինին գտնվում է Թիֆլիզում և ապրիլ 26-ին աւել է իր առաջին կոնցերտը։

—«Մշակը» Ապրիլ 25-ին ստացել է Վիէննայից, Տիգրան Նազարեանից, հետևեալ հեռագիրը. Կ. Պոլսից «Presse» լրագիրը այս բողէիս տեղեկութիւն ստացաւ, որ Սուլթանը ընդունեց հինգ նահանգների ինքնավարութեան ծրագիրը։ Վաղը կը հրատարակի «Presse» լրագրում։ Թէ որքան ճիշտ լուր է այդ, մեր հեռագիրներ կամ այլ գործակալութիւնները դեռ ոչինչ չեն հաղորդում։

—Կ. Պոլսից հաղորդում են որ շուտով Կիլիկիայում տեղի է ունենալու Սսոյ հայոց կաթուղիկոսի ընտրութիւնը։

—Ռէյտէրի գործակալութիւնը հաղորդում է որ Կիպրոսի վրայ կայացաւ մի մեծ ժողով որին ներկայ էր ահագին բազմութիւն։ Այդ ժողովում քննվում էր կղզու դրութիւնը և վճռվեց դիմել Անգլիային մի յայտագրով, որի մէջ բացատրելով իրենց ցանկութիւնները խնդրում են նպաստել որ Կիպրոս կղզին անցնի Յունաստանի ձեռքը։

—Թերթերը հաղորդում են որ Գերմանիայի կայսրը կամենում է լուծել Բայխստագը և պիտի վերընտրել ասյ ոչ թէ այժմեան ձևով—այսինքն ընդհանուր, այլ սահմանափակ քուէարկութեամբ։ Լաւ է առաջ գնում Գերմանիան, խօսք չը կայ։

—Հիւսիսային բևեռը գտնուեց վերջապէս, Ֆ. Նանսէն սկանդինաւացի յանդուգն ճանապարհորդի ձեռքով։ Այդ գիւտը մեծ յուզում է առաջացրել Եւրոպայում, որովհետև նրան գտնելու աշխատողները բոլորը զոհուել են առանց յաջողելու. բանը այն է, որ այդ բևեռում փոխանակ սոսկալի ցուրա լինելու, գտել է 3° տաքութիւն և լեռների երկար մի շղթայ։ Նշանաւոր գիւտ է այս և Ֆ. Նանսէն կը վայելի բոլոր քաղաքակիրթ աշխարհի գովեստը։

ՀԵԴԱԳԻՐՆԵՐ

Տոկիո. մայիս 16 (Ն. տ.) Չինաստանի և Ժապոնիայի մէջ եղող բանակցութիւնները Լիաթունկ կղզին թողնելու համար դեռ շարունակվում են, բայց ոչինչ որոշ ձև չեն ստացել։

Լոնդոն. մայիս 17 Վերջնականապէս համաձայնութիւն է կայացել Ժապոնիայի և Եւրոպական պետութիւնների մէջ։

Վիէննա. մայիս 16. Կոմս կալնոկին հրաժարական է տուել։

Լոնդոն. մայիս 17. Այստեղ լուր է հասնում որ Շանհէյկվանում զօրքերը ապստամբուել են և կողոպտել են քաղաքը, ժողովուրդը փախնում է.—Նիկարագուան վճարել է Անգլիայի պահանջը։

Մադրիտ. մայիս 17. Սպանիական կառավարութիւնը Կուբայի ապստամբների դէմ ուղարկում է նոր զօրութիւններ։

Պետերբուրգ. մայիս 17. Պրեսալիտովսկը այրուել է. Ժողովուրդը քնած էր երբ հրդեհը սկսեց. մեծ վնասներ են եղել։

Վիէննա. մայիս 18. Կոմս Գոլուշովսկի լեհացին, որ կղերական կուսակցութեան գլխաւորն է, որոշուել է փոխարինել Կալնոկիին՝ Աւստրո Հունգարական արտաքին գործոց մինիստրութեան համար։

Սուէզ. մայիս 20. Թրքական ուխտաւորներով լիքը մի նաւ Ջէտտէհի մօտ խորտակուել է. 700 անձեր են եղել նաւի վրայ, որոնք բոլորն էլ ազատուել են։

Լոնդոն. մայիս 22. Ռուսական գերմանական և ֆրանսական կառավարութիւնները պահանջել են Ժապոնիայից որ նա վերջապէս որոշի այն փոխարինութեան չափը որը նա պահանջում է օրպէս վարձ Լիաթունկը թողնելուն։

Լոնդոն. մայիս 22. Լաբուշերը իւր «Truth-ի» մէջ գրուած յօդուածում ասում է որ անհրաժիշտ է պարլամենտը շուտով լուծել. իսկ նախ քան դրան, Բոզբէրիի փոխարէն Սըր Հարքուրդին նշանակեն իբր առաջին նախարար։ Կարծում է որ այժմեան ազատականների անգլուխ դրութիւնը կ'անդամալուծէ ամեն գործողութիւնները։

Բերլին. մայիս 22։ Պրուսական գիտը որոշեց վիճաբանութեան ենթարկել միջազգային դրամական ընթացքի հարցը, աչքի առաջ ունենալով բեմիտալիզմը հաստատելու խնդիրը. այն պայմանով որ Գերմանիան Անգլիայի հետ համաձայնութեամբ դործէ։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐ. ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ, իր աբբահօր 50-ամեայ յօբելեանի պատիւ, հիմնելու է մի արևելստագիտական արհեստանոց Այտնեան» անունով. արհեստանոցի նպատակն է հայ տղաներ բերել ամէն կողմից և ձեռագործ արհեստներ սովորեցնելով 3—4 տարուայ մէջ վարպետ հանել և ետ դարձնել։

Այդ նպատակի համար յանձաժողով է կազմած, որը և ընդունում է նուէրներ։

Նուէրները կարելի է հասցնել հետևեալ հասցէով։

Au couvent des RR. PP. Mechitharistes.
VII/2 Mechitharistengasse.4
Vienne (Autriche)
3—3

„ԾԱՂԻԿ"
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ
ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Խմբագիր՝ Արշակ Զօպանեան
Հրատարակվում է Կ. Պոլսում. Տարեկան բաժանորդագինն է 40 դրուշ։
Հասցէ. Constantinople Mr. A. Tchobanian. Tchacmactchilér. Hakopian Khan № 9.
2—2

"ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ"
ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՐԻԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

«Հանդէս» առաջիկայ տարին կը հրատարակուի նոյն ծաւալով աւելի ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ։

Բաժանորդագինն և այլ ամենայն պայմանք նոյն կը մնան։

Կը խնդրենք մեր բաժանորդներէն որ յառաջ նորոգել բաժանորդագրութիւնը, գիմելով մեր գործակալութեանց։ Հրատարակվում է Վիէննայում Մխիթարեան միաբանութեան խմբագրութեամբ։

Բաժանորդագին տարեկան 10 ֆրանկ

Հասցէ. Rédaction de la Revue «Hantess» Au Couvent des RR. PP. Méchitharistes à Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.
2—3

ՓԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ
ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Հայկազեանվարժարանի 1894—95 տարեշրջան

Քննութիւնները սկսվում են կէսօրից առաջ 9—11. կէսօրից յետոյ 2—4

Մայիս 16 երկուշաբթի I և II դաս. կէսօրից առաջ և յետոյ. Բնական գիտութիւններ։

Մայիս 16 երեքշաբթի I և II դաս. կէսօրից առաջ՝ ընդհանուր պատմութիւն կէսօրից յետոյ՝ Հայոց պատմութիւն։

Մայիսի 17 Չորեքշաբթի I և II դաս. կէսօրից առաջ և յետոյ՝ Հայերէն։

Մայիս 18 հինգշաբթի I և II դաս. Հայոց պատմութիւն և աշխարհագրութիւն.

Մայիս 19 Ուրբաթ II դաս. կէսօրից առաջ և յետոյ՝ աշխարհագրութիւն։

Մայիս 20 շաբաթ. I և II դաս. թուաբանութիւն և գծագրութիւն։

ՓՈՐԱՃՃՈՒԻ (որ կոչվում է ժապոնական) (Solitaire Tenia) ԴԷՄ
ԽԻՍՏ ԱԶԴՈՒ ԴԵՂ
Փորձած «Շաւիղի» խմբագրութիւնից և զօրութիւնը երաշխաւորած։ Դեղը 3—4 ժամուայ ընթացքում ՁԳՈՒՄ Է ՃՃՈՒԻ ԳԼՈՒԽԸ և լիովին ազատում նրանից։ Ոչ մի լեզուութիւն չունի. հարկաւոր չէ ոչ լուծողական և ոչ էլ ծոմապահութիւն։ Հարկաւոր եղած պատուէրները գրաւոր կրպով կուղարկվեն դեղի հետ։ Դեղը փոշի է։ Գինն է Մէկ թումման (2 ռուբլի)։ Դիմել Թէհրան, Մահտեսի Յորդանան Էլիքզարեան։ Téhéran (Perse) M. Hordanan Eliqzarian։ Պատուէրները կատարվում են անմիջապէս և խնամքով։
1—3